Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և «Գազպրոմ էքսպորտ» ՍՊԸ-ի միջև կնքված 2014 - 2021 թթ. Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման № 02-13-04 Կոնտրակտի՝ № 105 առ 29.10.2021 թ. լրացուցիչ համաձայնագրի՝ 2022 թ. ապրիլի 1-ից Հայաստանի Հանրապետություն առաքվող բնական գազի փաստացի գինը սահմանվում է հավասար 165 ԱՄՆ դոլար հազար խորանարդ մետրի դիմաց՝ 7900 կկալ/խմ ստորին ջերմատվության պայմաններում և 177,53 ԱՄՆ դոլար հազար խորանարդ մետրի դիմաց՝ 8500 կկալ/խմ ստորին ջերմատվության պայմաններում: Միաժամանակ, եթե բնական գազի ստորին ջերմատվության փաստացի ամսական միջին կշռութային մեծությունը լինի բարձր կամ ցածր 8500 կկալ/խմ, գինը համապատասխանաբար կփոփոխվի ուղիղ համամասնորեն այդ փոփոխությանը:
Այդ կապակցությամբ, 2022թ. ապրիլի 1-ից «Գազպրոմ էքսպորտ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքումն ապահովելու նպատակով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետությունում սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վերանայման հայտով:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի № 359-Ն առ 23.10.2013 թ. որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգով նախատեսված ժամկետները, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն առաջարկում է. Հայաստանի Հանրապետության բնական գազի բոլոր սպառողների համար 2022 թ. ապրիլի 1-ից սահմանել հետևյալ սակագները, ներառյալ ավելացված արժեքի հարկը.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի № 1122-Ն որոշման համաձայն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի սակագինը՝ տարեկան՝

- մինչև 600 խորանարդ մետր բնական գազի համար՝

Գործող սակագինը՝ 100 000 դրամ:

Առաջարկվող բանաձև՝

$$P_{\text{առց.}} = \left(\mathbf{22986,18 + 90054,52} * \frac{Q_{\text{կալ.մ.ա.}}}{\mathbf{8500}}\right) * (\mathbf{1} + \text{ԱԱՀ}), \text{ որտեղ՝}$$

$Q_{\text{կալ.մ.ա.}}$–ն բնական գազի ստորին ջերմատվության փաստացի ամսական միջին թվաբանական մեծությունն է,

$P_{\text{առց.}}$-ն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողներին վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է տարեկան մինչև 600 խորանարդ մետր բնական գազի համար (դրամ/հազար խորանարդ մետր), ընդ որում՝ 8500 կկալ/խմ ստորին ջերմատվության պայմաններում սակագինը կկազմի 135 648,85 դրամ,

ԱԱՀ-ն ավելացված արժեքի հարկն է:

- 600 խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝

Գործող սակագինը՝ 139 000 դրամ:

Առաջարկվող բանաձևը՝

$$P_{\text{առց.}} = \left(\mathbf{22986,18 + 90054,52} * \frac{Q_{\text{կալ.մ.ա.}}}{\mathbf{8500}}\right) * (\mathbf{1} + \text{ԱԱՀ}), \text{ որտեղ՝}$$

$P_{\text{առց.}}$ -ն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողներին վաճառվող 600 խորանարդ մետրը գերազանցող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր), ընդ որում՝ 8500 կկալ/խմ ստորին ջերմատվության պայմաններում սակագինը կկազմի 135 648,85 դրամ:

2. Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝

ա. յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման բանաձևը՝ նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար՝

Գործող բանաձևը՝

$$\mathbf{P_{ջ} = 224 * E,}$$ որտեղ՝

Pջ*-ն ջերմոցային տնտեսություններին նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր),*
E-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է:

Առաջարկվող բանաձևը՝

$$\mathbf{P_{ջ} = \left(47,89 + 187,61 * \frac{Q_{կալ.մ.ա.}}{8500}\right) * E * (1 + ԱԱՀ),}$$ որտեղ՝

Pջ*-ն ջերմոցային տնտեսություններին նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր), ընդ որում՝ 8500 կկալ/խմ ստորին ջերմատվության պայմաններում բանաձևը կկազմի 282,6 * E,*
E-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է:

բ. սակագինը՝ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար՝

Գործող՝

ամսական մինչև 10,0 հազար խորանարդ մետր բնական գազի համար 5-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված սակագնին հավասար, իսկ ամսական 10 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար 5-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված բանաձևի համաձայն հաշվարկվող սակագնին հավասար:

Առաջարկվող՝

ամսական մինչև 10,0 հազար խորանարդ մետր բնական գազի համար 5-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված բանաձևի համաձայն հաշվարկվող սակագնին հավասար, իսկ ամսական 10 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար 5-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված բանաձևի համաձայն հաշվարկվող սակագնին հավասար:

3. Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող՝ պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող, անձանց վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման՝

Գործող բանաձևը՝

$$\mathbf{P_{վ} = 224 * E,}$$ որտեղ՝

Pվ*-ն վերամշակող՝ պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող, անձանց վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր):*

Առաջարկվող բանաձևը՝

$$\mathbf{P_{վ} = \left(47,89 + 187,61 * \frac{Q_{կալ.մ.ա.}}{8500}\right) * E * (1 + ԱԱՀ),}$$ որտեղ՝

Pվ*-ն վերամշակող՝ պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող, անձանց վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր), ընդ որում՝ 8500 կկալ/խմ ստորին ջերմատվության պայմաններում բանաձևը կկազմի 282,6 * E:*

4. Ջերմային էլեկտրակայաններում (այդ թվում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայաններում) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝

ա. ամսական մինչև 10,0 հազար խորանարդ մետր բնական գազի համար՝

Գործող սակագինը՝ 139 000 դրամ:

Առաջարկվող բանաձևը՝

$$P_{\text{ՋԷԿ մինչև 10,0}} = \left(\mathbf{22986,18 + 90054,52} * \frac{Q_{\text{կալ.մ.ա.}}}{\mathbf{8500}}\right) * (\mathbf{1} + \text{ԱԱՀ}),$$ որտեղ՝

$P_{\text{ՋԷԿ մինչև 10,0}}$*-ն ջերմային էլեկտրակայաններում (այդ թվում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայաններում) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց վաճառվող՝ յուրաքանչյուր հաշվետու ամսում մինչև 10,0 հազար խորանարդ մետր վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր), ընդ որում՝ 8500 կկալ/խմ ստորին ջերմատվության պայմաններում սակագինը կկազմի 135 648,85 դրամ:*

բ. ամսական 10,0 հազար խորանարդ մետր գերազանցող բնական գազի համար՝

Գործող բանաձևը՝

$$P_{\text{ՋԷԿ}} = \mathbf{255,91} * \mathbf{E},$$ որտեղ՝

$P_{\text{ՋԷԿ}}$ *– ջերմային էլեկտրակայաններում (այդ թվում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայաններում) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց վաճառվող՝ յուրաքանչյուր հաշվետու ամսում 10,0 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր):*

Առաջարկվող բանաձևը՝

$$P_{\text{ՋԷԿ 10,0-ից ավել}} = \left(\mathbf{47,89 + 187,61} * \frac{Q_{\text{կալ.մ.ա.}}}{\mathbf{8500}}\right) * \mathbf{E} * (\mathbf{1} + \text{ԱԱՀ}),$$ որտեղ՝

$P_{\text{ՋԷԿ 10,0-ից ավել}}$ *-ն ջերմային էլեկտրակայաններում (այդ թվում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայաններում) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց վաճառվող՝ յուրաքանչյուր հաշվետու ամսում 10,0 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր), ընդ որում՝ 8500 կկալ/խմ ստորին ջերմատվության պայմաններում բանաձևը կկազմի* $282,6 * E$*:*

5. 1-4 կետերով չնախատեսված մյուս սպառողներին վաճառվող հազար խորանարդ մետր բնական գազի՝

ա. ամսական մինչև 10,0 հազար խորանարդ մետր բնական գազի համար՝

Գործող սակագինը՝ 139 000 դրամ:

Առաջարկվող բանաձևը՝

$$P_{\text{Այլ մինչև 10,0}} = \left(\mathbf{22986,18 + 90054,52} * \frac{Q_{\text{կալ.մ.ա.}}}{\mathbf{8500}}\right) * (\mathbf{1} + \text{ԱԱՀ}),$$ որտեղ՝

$P_{\text{Այլ մինչև 10,0}}$ *- 1-4 կետերով չնախատեսված մյուս սպառողներին վաճառվող ամսական մինչև 10,0 հազար խորանարդ մետր բնական գազի սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր), ընդ որում՝ 8500 կկալ/խմ ստորին ջերմատվության պայմաններում սակագինը կկազմի 135 648,85 դրամ:*

բ. ամսական 10,0 հազար խորանարդ մետր գերազանցող բնական գազի համար՝

Գործող բանաձևը՝

$$P = \mathbf{255,91} * \mathbf{E},$$ որտեղ՝

P*-ն 1-4 կետերով չնախատեսված մյուս սպառողներին վաճարվող՝ յուրաքանչյուր հաշվետու ամսում 10 հազ խորանարդ մետրը գերազանցող բնական գազի սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր):*

Առաջարկվող բանաձևը՝

$$P_{\text{Այլ 10,0-ից ավել}} = \left(47,89 + 187,61 * \frac{Q_{\text{կալ.մ.ա.}}}{8500}\right) * E * (1 + \text{ԱԱՀ}),$$ որտեղ՝

$P_{\text{Այլ 10,0-ից ավել}}$-*ն 1-4 կետերով չնախատեսված մյուս սպառողներին վաճառվող՝ յուրաքանչյուր հաշվետու ամսում 10,0 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր), ընդ որում՝ 8500 կկալ/խմ ստորին ջերմատվության պայմաններում բանաձևը կկազմի 282,6 * E:*

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43
Հեռախոս 29-47-28, Ֆաքս 29-47-28
Էլեկտրոնային փոստի հասցեն՝ inbox@gazpromarmenia.am